ՀԱՅԱՍՏԱՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Իրավապահներն ապօրինի ուժ են կիրառել հակակառավարական ցույցերի ընթացքում: Լրագրողները բախվել են ոտնձգությունների և բռնության կառավարության կողմնակիցների կողմից: Ոչ մի առաջընթաց չի գրանցվել 2020 թվականին Ադրբեջանի հետ զինված հակամարտության ընթացքում կատարված պատերազմական հանցագործությունների և միջազգային օրենքի համաձայն այլ հանցագործությունների հետաքննության հարցում: ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականությունը մնացել է որպես սովորական երևույթ: Մի քանի փաստաբաններ հայտնել են, որ իրենց նկատմամբ դաժան վերաբերմունք է դրսևորվել կալանքի տակ գտնվող պաշտպանյալներին տեսակցելու ժամանակ: Բնապահպան ակտիվիստները շարունակել են ենթարկվել ոտնձգությունների: Բոլոր հանգամանքներում վերացվել է մահապատիժը:

ՆԱԽԱՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Հանրային դժգոհությունն ու բողոքի ակցիաներն աճել են կառավարության կողմից հարևան Ադրբեջանի հետ լարվածության կարգավորման շուրջ, ներառյալ Ադրբեջանի կողմից էթնիկ հայերով բնակեցված իր անջատված Լեռնային Ղարաբաղի շրջանի շրջափակումը և ռազմական ճանապարհով գրավումը (տե՛ս Ադրբեջանի մուտքը): Ադրբեջանի Լեռնային Ղարաբաղի շրջանից ավելի քան 100.000 փախստականների ներհոսքն ավելացրել է տնտեսական և հումանիտար դժվարությունները: Ռուսաստանի հետ հարաբերությունները, որին Հայաստանը համարում էր իր անվտանգության երաշխավորը, կտրուկ վատթարացել են, մինչդեռ տնտեսությունը մնացել է մեծապես կախված Ռուսաստանից, այդ թվում՝ հիմնական ներմուծումների ու դրամական փոխանցումների համար: Դեկտեմբերին Հայաստանն ազատ է արձակել երկու ադրբեջանցի ռազմագերիների այն բանից հետո, երբ համաձայնել է աշխատել Ադրբեջանի հետ խաղաղության պայմանագրի ուղղությամբ:

ՉԱՓԻՑ ԱՎԵԼԻ ՈՒԺԻ ԿԻՐԱՌՈՒՄ

Բողոքի ցույցերը փողոցներում համատարած էին, պարբերաբար հաղորդում է ստացվել բռնության դեպքերի մասին ցուցարարների կողմից, ինչպես նաև ոստիկանության կողմից անհարկի, անհամաչափ և երբեմն ոչ խտրական ուժի կիրառման մասին:
Սեպտեմբերի 19-ին հազարավոր մարդիկ հավաքվել են մայրաքաղաք Երևանում՝ պահանջելու վարչապետի հրաժարականը և բողոքելու Լեռնային Ղարաբաղում Ադրբեջանի ռազմական հարձակման դեմ: Որոշ ցուցարարներ կոտրել են կառավարական շենքերի պատուհանները և բախվել ոստիկանների հետ: Հայաստանի Հելսինկյան կոմիտեն՝ բողոքի ցույցերը մշտադիտարկող ՀԿ-ն, հայտնել է, որ ոստիկանությունը երբեմն <<անհամաչափ և ոչ խտրական ուժ>> է կիրառել, այդ թվում՝ ծեծ և խլացուցիչ նռնակներն անմիջապես ամբոխի մեջ է նետել առանց զգուշացման: Հաղորդվել է, որ ավելի քան 140 ցուցարարներ բերման են ենթարկվել, իսկ ավելի քան 30-ը՝վիրավորվել: Ցուցարարների մեծ մասն ազատ է արձակվել առանց մեղադրանքի, մինչդեռ ոմանց նկատմամբ վարչական և քրեական վարույթներ են հարուցվել: Մինչև տարվա վերջ ոստիկանության կողմից ուժի ապօրինի կիրառման վերաբերյալ հաղորդումների առնչությամբ ոչ մի արդյունավետ հետաքննություն չի իրականացվել:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵԼՈՒ ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ

Լրատվական միջավայրը մնացել է հիմնականում ազատ և բազմակարծիք, բայց այն խորապես բևեռացված էր Լեռնային Ղարաբաղի հարցի և Ադրբեջանի հետ հակամարտության վրա: Միջազգային դիտորդները նաև հայտնել են ապատեղեկատվության և ատելության խոսքի աննախադեպ մակարդակի մասին: Մարտին Ռասիզմի և Անհանդուրժողականության դեմ Եվրոպական Հանձնաժողովը (ՌԱԵՀ) ողջունեց 2022 թվականի հուլիսին այն դրույթի ապաքրեականացումը, որով պատժվում էր պետական պաշտոնյաներին և հանրային գործիչներին վիրավորելը: Մտահոգություններ են մնացել՝ կապված լրագրողների անվտանգության հետ, որոնք շարունակել են պարբերաբար ճնշման, վիրավորանքների և բռնության ենթարկվել կառավարության կողմնակիցների կողմից: Առնվազն երկու լրագրողներ հայտնել են, որ առցանց ոտնձգությունների և սպառնալիքների ինտենսիվ արշավի են ենթարկվել, այդ թվում՝ որոշ պետական պաշտոնյաների կողմից, հուլիսի 25-ին մամլո ասուլիսի ժամանակ Լեռնային Ղարաբաղի իրադարձությունների վերաբերյալ վարչապետին ուղղված իրենց քննադատական հարցադրումներից հետո: Տարեվերջին շարունակվել է լրագրողական գործունեության նկատմամբ այս ենթադրյալ միջամտության առնչությամբ հետաքննությունը:

Կառավարության՝ առցանց ազատ արտահայտվելը սահմանափակելու փորձերը կանխվել են այն բանից հետո, երբ 2022 թվականի դեկտեմբերին առաջարկված փոփոխությունների նախագիծը միջազգային քննադատությունից հետո կասեցվեց: Փոփոխությունները լիազորություն կտային կառավարությանը գրաքննության ենթարկել առցանց բովանդակությունը, արգելափակել կայքերը և սահմանափակել ինտերնետի հասանելիությունը ռազմական դրության ժամանակ:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

Ոչ մի էական առաջընթաց չի գրանցվել Ադրբեջանի հետ 2020 թվականի զինված հակամարտության ընթացքում կամ անմիջապես դրանից հետո կատարված պատերազմական հանցագործությունների և միջազգային մարդասիրական իրավունքի համաձայն այլ խախտումների հետաքննությունների առնչությամբ կամ ենթադրյալ հանցագործներին պատասխանատվության ենթարկելու հարցում: Հոկտեմբերի 3-ին խորհրդարանը կողմ քվեարկեց ՄՔԴ-ի (Միջազգային քրեական դատարան) Հռոմի ստատուտի վավերացմանը:

Ադրբեջանում՝ Լեռնային Ղարաբաղում և դրա շրջակայքում հայկական ուժերի կողմից նախկինում տեղադրված ականները շարունակել են մահացու վտանգ ներկայացնել և կանխել են տեղահանված անձանց անվտանգ վերադարձը: Ըստ Ադրբեջանի ականազերծման գործակալության՝ օգոստոսի դրությամբ 2020 թվականի պատերազմից ի վեր ականներից վիրավորված կամ զոհված մարդկանց թիվը հասել է 303-ի, այդ թվում՝ քաղաքացիական անձինք: Հուլիսին ադրբեջանական լրատվամիջոցները հայտնել են, որ Հայաստանի կողմից տրամադրված ականադաշտերի քարտեզներն ընդամենը 25%-ով են ճշգրիտ, իսկ 600.000 ականների քարտեզները դեռևս բացակայում են:

ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԻ և ՄԻԳՐԱՆՏՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

Ավելի քան 100.000 մարդ, ըստ էության Լեռնային Ղարաբաղի ողջ էթնիկ հայ բնակչությունը, սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին մի քանի օրվա ընթացքում տեղահանվել է Հայաստան: Հայաստանի իշխանությունները հիմնականում բավարարել են մեծաթիվ փախստականների այս արագ ներհոսքի ժամանակավոր կարիքները: Մտահոգություններ են, այնուամենայնիվ, մնացել՝ կապված երկարատև լուծումների և համապատասխան բնակարանների, եկամտի և աշխատանքի հասանելիության հետ:

ԱՐԴԱՐ ԴԱՏԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

Մի քանի փաստաբաններ հայտնել են, որ իրենց նկատմամբ ոտնձգություններ են կատարվել և այլ կերպ դաժան վերաբերմունքի են արժանացել ոստիկանության կալանավայրերում գտնվող իրենց պաշտպանյալներին տեսակցելիս և իրենց մասնագիտական պարտականություններն իրականացնելիս:
Փաստաբաններ Մարզպետ Ավագյանը և Էմանուել Անանյանը նկարագրել են, թե ինչպես են փետրվարի 9-ին մի խումբ ոստիկաններ վիրավորել, ոտքերով և բռունցքներով հարվածել իրենց Երևանի ոստիկանության բաժանմունքում: Փաստաբանները պնդել են, որ իրենց վրա հարձակվել են, երբ պաշտպանել են իրենց պաշտպանյալների իրավունքները, որոնք անչափահասներ են և նույնպես ենթարկվել են խոշտանգումների կամ այլ դաժան վերաբերմունքի նույն ոստիկանների կողմից:

ԼԳԲՏԻ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

ԼԳԲՏԻ անձանց նկատմամբ խտրականությունը և սոցիալական խարանը՝ հիմնված անձի իրական կամ ընկալվող սեռականության վրա, մնացել են որպես սովորական երևույթ: Մարտին ընդունված իր զեկույցում ՌԱԵՀ-ն (Ռասիզմի և Անհանդուրժողականության դեմ Եվրոպական Հանձնաժողով) նշել է, որ Հայաստանում ԼԳԲՏԻ անձինք շարունակել են ենթարկվել խտրականության, մարգինալացման, հարձակումների և ահաբեկման: Այն առաջարկել է արագ իրավական պատժամիջոցներ ընդունել խտրականության համար բոլոր հիմքերով, այդ թվում՝ սեռական կողմնորոշման և գենդերային ինքնության համար, վերացնել հոգեկան խանգարման խարանը միասեռական սեռական կողմորոշումից և հակազդել հոմոֆոբ դիսկուրսի այլ ձևերին:

ԱՌՈՂՋ ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ԻՐԱՎՈՒՆՔ

Փետրվարին իշխանությունները հայտարարեցին, որ Ամուլսարի ոսկու հանքում արդյունահանումը վերսկսվելու է՝ չնայած շրջակա միջավայրին հասցվող հնարավոր վնասների մասին առկա մտահոգություններին: Ակտիվիստները, որոնք դեմ էին ծրագրին, շարունակել են ոտնձգությունների ենթարկվել, այդ թվում՝ դատական հայցերի միջոցով, որոնք պահանջել են չափազանց մեծ ֆինանսական փոխհատուցումներ նրանց բնապահպանական քննադատության համար:

ՄԱՀԱՊԱՏԻԺ

Հոկտեմբերին Հայաստանը վավերացրեց Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի թիվ 13 արձանագրությունը՝ դրանով ավարտին հասցնելով մահապատժի վերացումը բոլոր հանգամանքներում, այդ թվում՝ այն հանցագործությունների համար, որոնք կատարվել են պատերազմի և պատերազմի անմիջական սպառնալիքի ժամանակ: